ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

03.09.2024 թ. կնքված N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-24/157 գնման պայմանագրի

ք. Երևան

«18» «10» 2024թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Վ.Պապիկյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, «ԱՍ-777» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Դ.Եսայանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին՝ (այսուհետև՝ Կողմեր), ղեկավարվելով Գնումների մասին օրենսդրությամբ և հիմք ընդունելով 03.09.2024 թ. կնքված N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-24/157 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը և Երևանի քաղաքի **Դավթաշեն** վարչական շրջանի կողմից ներկայացված գրությունը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրով նախատեսված **Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի 2-րդ թաղամասի 8-12 շենքերի բակի բարեկարգման աշխատանքների** կատարման դիմաց վճարման ենթակա գումարը սահմանել 42510000 (քառասուներկու միլիոն հինգ հարյուր տասներ հազար) ՀՀ դրամ, ներառյալ՝ ԱԱՀ-ն՝ համաձայն սույն համաձայնագրի N 1 հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. *Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
ՀՀ 900052476331
ՀՎՀՀ 02593108

Վ.Պապիկյան----------
(ստորագրություն)

Հ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԱՍ-777» ՍՊԸ
Ք. Երևան. Անդրանիկի Փ. Շ 22/14
«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1150008857457414
ՀՎՀՀ 01337749

Դ.Եսայան----------
(ստորագրություն)

Հ.Տ.

Հավելված թիվ 1
03.09.2024 թ. կնքված N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-24/157 գնման պայմանագրի
«18» «10» 2024թ. կնքված թիվ 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45611300/679	Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի 2-րդ թաղամասի 8-12 շենքերի բակի բարեկարգման աշխատանքներ	...	...	...	...	...	...	...	...	...	42510000	42510000	42510000	42510000

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
Ք. Երևան, Արգիշտիի փ. 1
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
ՀՀ 900052476331
ՀՎՀՀ 02593108

Վ.Պապիկյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԱՍ-777» ՍՊԸ
Ք. Երևան. Անդրանիկի Փ. Շ 22/14
«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1150008857457414
ՀՎՀՀ 01337749

Դ.Եսայան----------
(ստորագրություն)
Կ.Տ

BANK AMIO

N 8013-02

«17» 10 2024

ԵՐԱՇԽԻՔ
(պայմանագրի ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ բենեֆիցիար) և «ԱՍ-777» ՍՊԸ (այսուհետ՝ պրինցիպալ) միջև կնքվելիք N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-24/157 պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 5,713,825 (հինգ միլիոն յոթ հարյուր տասներեք հազար ութ հարյուր քսանհինգ) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900015211429 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև կնքվելիք N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-24/157 պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը, բայց ոչ ուշ քան 10.06.2026 թվականը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-24/157 պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագած վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կորպորատիվ բիզնեսի տնօրեն Ա. Պետրոսյան

BANK AMIO

N 8014-02

«17» 10 2024

ԵՐԱՇԽԻՔ
(որակավորման ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից ԵՔ-ԳՀԱՇՁԲ-24/157 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ԱՍ-777» ՍՊԸ (այսուհետ՝ պրինցիպալ) կողմից կնքվելիք N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-24/157 պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 8,570,738 (ութ միլիոն հինգ հարյուր յոթանասուն հազար յոթ հարյուր երեսունութ) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Երաշխիքի գումարը վճարելուց հաշվի է առնվում պայմանագրի կատարման շրջանակում բենեֆիցիարի և պրինցիպալի միջև երկկողմ հաստատված և պրինցիպալի կողմից երաշխիքը տված անձին ներկայացված հանձնման-ընդունման արձանագրության (արձանագրությունների) հիման վրա երաշխիքի գումարից կատարված նվազեցումները: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900015211429 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-24/157 ծածկագրով կնքվելիք պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը, բայց ոչ ուշ քան 10.06.2025 թվականը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-24/157 ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը.

3) պայմանագրի շրջանակում բենեֆիցիարի և պրինցիպալի միջև երկկողմ հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը (արձանագրությունները) կամ դրա (դրանց) պատճենները:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ, 0010, ք. Երևան, Նալբանդյան 48

«AMIO BANK» CJSC
48 Nalbandyan Str., Yerevan, 0010, Armenia
+374 10 59 20 20
www.amiobank.am

ЗАО «АМИО БАНК»
РА, 0010, г. Ереван, Налбандян 48

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կորպորատիվ բիզնեսի տնօրեն Ա. Պետրոսյան